
	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-51	Էջ 1/3
ՆՎԵՐ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 6	
		Ուժի մեջ է՝ 27.12.2017թ-ից	

1. Քարտի արժույթ	ՀՀ դրամ
2. Քարտի թողարկում	անվճար
3. Քարտի սպասարկում (գանձվում է միանվագ՝ քարտի տրամադրման պահին)	3,000 ՀՀ դրամ
4. Քարտի նվազագույն սահմանաչափ	10,000 ՀՀ դրամ
5. SMS հաղորդագրությունների ուղարկում (հաղորդագրություն ուղարկվում է 10,000 դրամ (համարժեք արտարժույթ) և ավելի գումարով գործարքների դեպքում)	անվճար
6. Քարտի առավելագույն սահմանաչափ	Չի սահմանվում
7. Կանխիկի տրամադրում՝	
ա) Ամերիաբանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում	2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
բ) Այլ բանկերի ArCa պլաստիկ քարտեր սպասարկող բանկոմատներում և կանխիկացման կետերում	2.5%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
գ) Այլ բանկոմատներում և կանխիկացման կետերում	3%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
8. Նվեր քարտի կորստի, գործողության ժամկետի ավարտի ¹ , վնասման, PIN-ը մոռանալու դեպքերում քարտին առկա գումարի փոխանցում հաճախորդի կողմից տրամադրված հաշվին/կանխիկ վճարում	2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
9. Անկանխիկ գործարքներ	անվճար

- 1.1. Բանկը տրամադրում է միայն ակտիվացում պահանջող նվեր քարտեր:
- 1.2. Նվեր քարտի վրա չի նշվում քարտապանի անունը և ազգանունը:
- 1.3. Նվեր քարտը ենթակա չէ օգտագործման ինտերնետ միջավայրում, այսինքն նվեր քարտի համար փակ է ինտերնետ բանկի հասանելիությունը:
- 1.4. Բանկը ակտիվացնում է նվեր քարտը նվիրատուի հանձնարարությամբ՝ Բանկի կողմից վերջինիս նույնականացնելուց և վերջինիս կողմից անհրաժեշտ փաստաթղթերը ստորագրելուց հետո:
- 1.5. Նվեր քարտի հայտը Բանկ ներկայացնելուց հետո նվեր քարտը Բանկի տարածքում ցայահանջ պահվում է 30 օր: Նշված ժամկետում նվեր քարտը չստանալու դեպքում հայտը համարվում է չեղարկված, և գումարը հետ է փոխանցվում նվիրատուի կողմից հայտում նշված հաշվեհամարին, և վճարված միջնորդավճարները չեն վերադարձվում:


¹ Եթե քարտի ժամկետի ավարտին քարտային հաշվի մնացորդը չի փակարարում միջնորդավճարի գանձմամբ գործարք կատարելու համար, գումարը փոխանցվում է այլ հաշվի առանց միջնորդավճարի գանձման: Այլ հաշվի վնեքի ֆացակայության դեպքում ֆացվում է սպասարկման պայմանագիր և մեկ տարվա ընթացքում շրջանառության ֆացակայության դեպքում մնացորդը գանձվում է:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-51	Էջ 2/3
ՆՎԵՐ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 6	
		Ուժի մեջ է՝ 27.12.2017թ-ից	

- 1.6. Նվեր քարտը ենթակա չէ վերաթողարկման:
- 1.7. Նվեր քարտի գումարը հնարավոր է օգտագործել բացառապես քարտի օգտագործմամբ: Նվեր քարտը չի կարող օգտագործվել ինտերնետ միջավայրում գործարքներ կատարելու համար:
- 1.8. Նվեր քարտի կորստի, գործողության ժամկետի ավարտի, վնասման, PIN-ը մոռանալու, բանկումատում առգրավման, ինչպես նաև քարտի հետ կապված այլ խնդիրների առկայության դեպքում Բանկ կարող է դիմել նվիրատուն, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա՝ նվիրատուն:
- 1.9. Նվեր քարտի կորստի, գործողության ժամկետի ավարտի, վնասման, PIN-ը մոռանալու դեպքերում քարտին առկա գումարը Բանկը վճարում է հաճախորդին՝ գանձելով սույն Պայմաններով սահմանված միջնորդավճարները:
- 1.10. Նվեր քարտի կորստի կամ դրա անօրինական օգտագործման արդյունքում/այդ թվում երրորդ անձանց կողմից քարտի օգտագործման դեպքում/ առաջացած բոլոր հետևանքների ռիսկերը կրում է նվիրատուն, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա՝ նվիրատուն:
- 1.11. Նվեր քարտի գործողության ժամկետի ավարտից հետո նվեր քարտը փակվում է:
- 1.12. Նվեր քարտի փակումից հետո քարտին առկա դրական մնացորդի փոխանցումը կատարվում է համաձայն նվիրատուի հանձնարարականի, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա՝ համաձայն նվիրատուի հանձնարարականի՝ գանձելով Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը:
- 1.13. Եթե դրական մնացորդի փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրվել հաճախորդի կողմից ապա Նվեր քարտի փակումից հետո քարտին դրական մնացորդի առկայության դեպքում քարտային հաշիվը սպասարկվում է համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների» և «Ամերիաբանկ ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների»:
- 1.14. Սույն Պայմանները գործում են ի լրումն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների» և «Ամերիաբանկ ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների»:
- 1.15. Քարտի գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Նվիրատուի կողմից, ինչպես նաև քարտի ակտիվացման համար նվիրատուի կողմից ներկայացվող փաստաթղթեր՝

- ✓ Անձը հաստատող փաստաթուղթ¹,
- ✓ Հանրային ծառայությունների համարանիշ (կիրառելի չէ ոչ ռեզիդենտների համար)²: Եթե նվիրատուն չի ցանկանում հաշիվ բացել Բանկում, հանրային ծառայությունների համարանիշը չի պահանջվում:

	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	10RB PL 72-51	Էջ 3/3
ՆՎԵՐ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ		Խմբագրություն 6	
		Ուժի մեջ է՝ 27.12.2017թ-ից	

Բանկի կողմից տրամադրվող ձևանմուշով լրացվող փաստաթղթեր՝

- ✓ Նվեր քարտի տրամադրման հայտ-պայմանագիր (նվիրատուի կողմից),
- ✓ Նվեր քարտի ակտիվացման հայտ-պայմանագիր (նվիրատուի կողմից):

[1] Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ է համարվում՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը (այդ թվում՝ կենսաչափական անձնագիրը), նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը.

բ) ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը.

գ) փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

դ) օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.

ե) քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.

զ) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

[2] Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտում, օտարերկրյա քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունում կացության քարտում, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքում: Նախկինում տրամադրված սոցիալական ապահովության քարտի համարը նույնպես համարվում է հանրային ծառայությունների համարանիշ: Հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում հաճախորդը պետք է ներկայացնի է ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ: